ԱՐՄԵՆ ՈՒՄՐՇԱՏՅԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է

26.10.2016 15:43

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) **06.07.2015թ. թիվ ԿԳ/78-Ա որոշմամբ** կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել փաստաբան Արմեն Ումրշատյանը:

Փաստաբանը մեղավոր էր ճանաչվել **Փաստաբանի վարքագծի կանոնագրքի** 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտումների համար, իսկ որպես կարգապահական տույժ խորհուրդը որոշել էր դադարեցնել փաստաբան Արմեն Ումրշատյանի փաստաբանական գործունեության թիվ 385 արտոնագրի գործողությունը:

Խորհրդի որոշումը դատական կարգով բողոքարկվել է փաստաբան Արմեն Ումրշատյանի կողմից: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2016թ. վճռով հայցը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.08.2016թ. որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2016թ. վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.10.2016թ. որոշմամբ մերժվել է փաստաբան Արմեն Ումրշատյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 06.07.2015թ. թիվ ԿԳ/78-Ա որոշումը մտել է օրինական ուժի մեջ և Արմեն Ումրշատյանի փաստաբանական գործունեության թիվ 385 արտոնագրի գործողությունը համարվում է դադարեցված:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })